ռազմավարություն
2011-2020



# 2011-2020 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ
# 2011-2020 STRATEGIC PLAN

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society







# բովանդակություն
# contents


Who we are page 11
Ով ենք մենք էջ 11

What we do page 15
Ինչ ենք անում էջ 15

How we work page 17
Ինչպես ենք գործում էջ 17









էջ 4
Ներածություն

էջ 5
Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժում

էջ 6
Հիմնարար սկզբունքները և արժեքները

էջ 8
Երկրի իրավիճակը

էջ 19
Ուր ենք հասնում

Page 4
Introduction

Page 5
International Red Cross and Red Crescent Movement

Page 6
Fundamental Principles and Values

Page 8
Country context

Page 19
Where we reach

# INTRODUCTION ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ




Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) 2011-2020թթ. Ռազմավարական պլանն Ազգային ընկերության գործունեության պլանավորման գործիք է և հետագա ինը տարիների ընթացքում կծառայի որպես ուղեցույց՝ ընկերության հիմնական ուղղությունների և ծրագրերի միջոցով առաքելությանը հասնելու համար:
ՀԿԽԸ առաքելությունն է՝ նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ: Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ: Ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:
Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի անդամ, Հայկական կարմիր խաչի ընկերությունը մշակել է իր Ռազմավարական պլանը՝ հիմք ընդունելով Ֆեդերացիայի 2020 Ռազմավարությունը և ինտեգրվելով այն, հաշվի առնելով երկրի դրությունը և երկրում առկա գերակշիռ կարիքները :
Գաղտնիք չէ, որ այսօր երկրի առջև ծառացած են լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրներ և, հաշվի առնելով ազգաբնակչության կարիքները և դրանք հոգալու մեր սահմանափակ հնարավորությունները, մենք պետք է հստակեցնենք մեր առաքելությունը և համապատասխանաբար ու արդյունավետ կերպով օգտագործենք մեր ռեսուրսները, որպեսզի ունենանք ավելի լավ արդյունք՝ մարդկանց ապրելակերպը բարելավելու մեր մարդասիրական գործում:
Այս ռազմավարական պլանը կծառայի նաև որպես հեղինակություն ներշնչող փաստաթուղթ Ազգային ընկերության նվիրատուների և հովանավորների համար :
Կայուն ու լավ գործող Ազգային ընկերություն դառնալու ճանապարհին, մենք ակնկալում ենք այս Ռազմավարական պլանի վրա հիմնված արդյունավետ, իրական գործողություններ:

The Armenian Red Cross Society (ARCS) Strategic Plan 2011-2020 is a planning tool of the National Society and will serve as a guide in the upcoming nine years for achieving our mission through the main directions and programmes realized by the organization.

The mission of the ARCS is to improve the lives of vulnerable people by mobilizing the power of humanity. To prepare for emergencies that may increase vulnerability. To provide necessary assistance in case of need. To provide relief to those living in poor social economic conditions.

As a member of the International Federation, Armenian Red Cross Society developed its Strategic Plan, based on the Federation Strategy 2020, integrating it taking into account the country context and the prevailing needs within the country.

It is well known that today our world faces serious social and economic challenges, and, taking into account the need of population and our limited abilities to address them, we have to make our mission more clear and use our resources in adequate and more efficient ways to achieve better results in our humanitarian cause of improving peoples' lives.

The strategic plan will also serve as an authoritative document for the donors and partners of the NS.

On our way to becoming a self-sustainable and well-functioning National Society, we expect efficient and substantial actions based on the Strategic Plan.

# ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ

## Կարմիր խաչի միջազգային Կոմիտե (ԿԽՄԿ)

Անկողմնակալ, չեզոք և անկախ կազմակերպություն հանդիսացող Կարմիր խաչի միջազգային կոմիտեն իրականացնում է զինված ընդհարումների և բռնության այլ իրավիճակների զոհերի կյանքը և արժանապատվությունը պաշտպանելու և նրանց օգնության հասնելու բացառապես մարդասիրական առաքելություն: Այն ուղղորդում և համակարգում է միջազգային օգնության գործունեությունը՝ հակամարտության ժամանակ ղեկավարվելով շարժման կողմից: ԿԽՄԿ-ն նաև ջանում է կանխարգելել մարդկային տառապանքները համընդհանուր մարդասիրական սկզբունքների խթանման և ամրապնդման միջոցով:
1863թ. ստեղծված ԿԽՄԿ-ն կանգնած է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման ակունքներում:

## Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա (ԿԽ/ԿՄ ՄՖ)

ԿԽ/ԿՄ ՄՖ աշխարհի ամենամեծ մարդասիրական կազմակերպությունն է, որը օգնություն է ցուցաբերում անկախ ազգությունից, ռասայից, կրոնից, դասակարգից և քաղաքական հայացքներից: Ֆեդերացիան ղեկավարվում է ԿԽ և ԿՄ միջազգային շարժման հիմնարար սկզբունքներով, ոգեշնչելով, խրախուսելով, նպաստելով և աջակցելով ԱԸ-ների կողմից իրականացվող մարդասիրական գործունեության բոլոր գործողությունները՝ բարելավելու սոցիալապես անապահով և խոցելի խմբերի վիճակը:
Հիմնված 1919թ., ԿԽ/ԿՄ ՄՖ կազմում կան 186 ազգային ընկերություններ: Ֆեդերացիան խրախուսում է համագործակցությունը ԱԸ-ների միջև, նպատակ ունենալով ուժեղացնել կարողությունները աղետներին դիմակայելու, ինչպես նաև իրականցնելու սոցիալ առողջապահական ծրագրեր:

## Ազգային ընկերություններ /ԱԸ/

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ազգային ընկերությունները իրենց երկրում աշխատում են աջակցել տեղական իշխանություններին մարդասիրական ոլորտում եւ ապահովել մի շարք ծառայություններ, այդ թվում, աղետներին արձագանքում, առողջապահական եւ խնամքի ծրագրեր: Ռազմական գործողությունների ժամանակ ԱԸ-ները տրամադրում են օգնություն քաղաքացիներին, եւ անհրաժեշտության դեպքում բանակին ցուցաբերում բժշկական օգնություն:

Այս բոլոր բաղկացուցիչներն առաջնորդվում են շարժման 7 հիմնարար սկզբունքներով, հրապարակված 1965թ.:

# INTERNATIONAL RED CROSS AND RED CRESCENT MOVEMENT

## International Committee of the Red Cross (ICRC)

The International Committee of the Red Cross (ICRC) is an impartial, neutral and independent organization whose exclusively humanitarian mission is to protect the lives and dignity of victims of war and internal violence and to provide them with assistance. It directs and coordinates the international relief activities conducted by the Movement in situations of conflict. It also endeavours to prevent suffering by promoting and strengthening humanitarian law and universal humanitarian principles.

Established in 1863, the ICRC is at the origin of the International Red Cross and Red Crescent Movement.

## International Federation of Red Cross and Red Crescent Societies (Federation)

The International Federation of Red Cross and Red Crescent Societies is the world's largest humanitarian organization, providing assistance without discrimination as to nationality, race, religious beliefs, class or political opinions. The Federation works guided by the fundamental principles of the International Red Cross and Red Crescent Movement, inspiring, assisting and promoting by any means the humanitarian efforts of its member National Societies for improving condition of socially unsupported and vulnerable groups.
Founded in 1919, the Federation comprises 186 member Red Cross and Red Crescent societies. The Federation encourages co-operation between the National Societies, aiming at strengthening their capacity in preparedness for disasters, in realization of health and care programmes.

## National Red Cross and Red Crescent Societies

Work to support the public authorities in their own countries in the humanitarian field and to provide a number of services, including disaster relief, health and care programmes. During the military operations, the National Societies provide help to civilians and if necessary assist to army medical care.

All these components are guided by the 7 Fundamental Principles of the Movement, declared in 1965

# ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐԸ

## Հիմնարար սկզբունքները

### Մարդասիրություն

Ստեղծված լինելով մարտադաշտում վիրավորներին առանց խտրականության օգնություն ցուցաբերելու մտահոգությամբ, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժումն իր միջազգային և ազգային բնույթով ջանում է ամենուրեք կանխել ու թեթևացնել մարդկանց տառապանքները, ձգտում է պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, պահանջում է հարգել նրան, ինչպես նաև նպաստում է բոլոր ժողովուրդների միջև փոխըմբռնման, բարեկամության, համագործակցության և տևական խաղաղության հաստատմանը:

### Անկողմնակալություն

Այն խտրականություն չի դնում ազգության, ռասայի, կրոնական դավանանքների, դասակարգային կամ քաղաքական կարծիքների միջև: Այն ջանում է նվազեցնել անհատների տառապանքները՝ առաջնորդվելով բացառապես նրանց կարիքներով, և առաջնայնություն է տալիս աղետալի իրավիճակներում առավել անհետաձգելի դեպքերին:

### Չեզոքություն

Բոլորի վստահության վայելումը շարունակելու նպատակով Շարժումը չի կարող պաշտպանել  հակամարտության կողմերից որևէ մեկին և երբևէ ներգրավվել քաղաքական, ռասայական, կրոնական կամ գաղափարական բնույթ ունեցող վեճերի մեջ:

### Անկախություն

Շարժումն անկախ է: Ազգային ընկերությունները, մարդասիրական ծառայություններում լինելով իրենց կառավարությունների օգնականները և ենթարկվելով իրենց համապատասխան երկրների օրենքներին, պետք է մշտապես պահպանեն իրենց անկախությունը, որպեսզի միշտ կարողանան գործել Շարժման սկզբունքներին համապատասխան:

### Կամավորություն

Սա որևէ շահ չհետապնդող կամավոր օգնության շարժում է:

### Եզակիություն

Մեկ երկրում կարող է լինել Կարմիր Խաչի կամ Կարմիր Մահիկի միայն մեկ ընկերություն: Այն պետք է բաց լինի բոլորի համար: Այն պետք է իր մարդասիրական աշխատանքը ծավալի նրա ամբողջ տարածքով մեկ:

### Համընդհանրություն

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Միջազգային Շարժումը, որտեղ բոլոր ընկերություններն ունեն հավասար կարգավիճակ և իրար օգնելու հարցում կրում են հավասար պատասխանատվություն ու պարտականություններ, համաշխարհային է:

# FUNDA MENTAL PRINCIPLES AND VALUES

## Fundamental Principles

### Humanity

The International Red Cross and Red Crescent Movement, born of a desire to bring assistance without discrimination to the wounded on the battlefield, endeavours, in its international and national capacity, to prevent and alleviate human suffering wherever it may be found. Its purpose is to protect life and health and to ensure respect for the human being. It promotes mutual understanding, friendship, cooperation and lasting peace amongst all peoples.

### Impartiality

It makes no discrimination as to nationality, race, religious beliefs, class or political opinions. It endeavours to relieve the suffering of individuals, being guided solely by their needs, and to give priority to the most urgent cases of distress.

### Neutrality

In order to continue to enjoy the confidence of all, the Movement may not take sides in hostilities or engage at any time in controversies of a political, racial, religious or ideological nature.

### Independence

The Movement is independent. The National Societies, while auxiliaries in the humanitarian services of their governments and subject to the laws of their respective countries, must always maintain their autonomy so that they may be able at all times to act in accordance with the principles of the Movement.

### Voluntary service

It is a voluntary relief movement not prompted in any manner by desire for gain.

### Unity

There can be only one Red Cross or one Red Crescent Society in any one country. It must be open to all. It must carry on its humanitarian work throughout its territory.

### Universality

International Red Cross and Red Crescent Movement, in which all Societies have equal status and share equal responsibilities and duties in helping each other, is worldwide.

# Արժեքներ

**Մարդիկ:** Մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների կարողությունները` գործելու հանդուրժող միջավայրում և գտնելու կայուն լուծումներ իրենց ամենաանհրաժեշտ և խոցելի կարիքները հոգալու համար:

**Ազնվություն:** Մենք աշխատում ենք համաձայն մեր հիմնարար սկզբունքների` թափանցիկ և պատասխանատու կերպով:

**Համագործակցություն:** Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ` մենք համագործակցում ենք կառավարության, ինչպես նաև այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, հարգելով մեր խորհրդանիշները և ներկայացված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

**Բազմազանություն:** Մենք հարգում ենք համայնքների և մեր կամավորների, անդամների և աշխատակիցների բազմազանութունը` հիմնվելով անխտրականության և մեր անկողմնակալության և համընդհանրության սկզբունքների վրա:

**Առաջնորդություն:** Մենք ցուցաբերում ենք առաջնորդություն և մեր աշխատանքում ձգտում ենք գերազանցության` ուշադրություն դարձնելով համայքների և դրանց իրավունքներին, կարիքներին և խոցելիությանը:

**Նորամուծություն:** Մենք ներշնչվում ենք մեր ժառանգած պատմությունից և ավանդույթից, սակայն միաժամանակ փորձում ենք գտնել ստեղծագործական, կայուն լուծումներ խնդիրներին, որոնք վտանգում են փոփոխվող աշխարհում ապրող մարդկանց բարեկեցությունը և արժանապատվությունը:

# Values

**People:** We build the capacities of people and communities to work in solidarity to find sustainable solutions for their most pressing needs and vulnerabilities.

**Integrity:** We work in accordance with our Fundamental Principles in a transparent and accountable manner.

**Partnership:** As members of the International Red Cross and Red Crescent Movement, we cooperate with government and with other local and international organisations without compromising our emblems and the independence, impartiality and neutrality represented.

**Diversity:** We respect the diversity of the communities we work with and of our volunteers, members and staff, based on non-discrimination and our principles of impartiality, unity and universality.

**Leadership:** We show leadership and strive for excellence in our work, drawing attention to the rights, needs and vulnerabilities of communities and factors that underline them.

**Innovation:** We draw inspiration from our shared history and tradition but are equally committed to finding creative, sustainable solutions to problems that threaten human well-being and dignity in a changing world.

# COUNTRY CONTEXT ԵՐԿՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ




Անհավասար տնտեսական հնարավորությունները, տարածաշրջանային զարգացման տարբերությունները և անողոք աղքատության աճի ակներևությունը ենթադրում են, որ հետագա աղքատության կրճատման տոկոսները հադիսանում են Հայաստանի համար հիմնական մարտահրավեր: Մինչ այժմ աղքատության աստիճանի նվազեցումը մայրաքաղաքից դուրս հիմնված էր ֆինանսական փոխանցումների և մասնավոր ներդրումների վրա, ինչը նվազել է գլոբալ տնտեսական անկման պատճառով: Բազմաթիվ երկրների տնտեսության անկման պատճառով /հատկապես Ռուսաստանի/ առաջացած գաղթականների վերադարձը հավելյալ լարվածություն է մտցնում սոցիալական աջակցության տրամադրման և աշխատատեղերի ձեռք բերման հարցում: Տվյալները վկայում են տալիս, որ աղքատության տոկոսները ավելի բարձր են մարզերում: Բնակչության մոտ 36%-ը ապրում է գյուղական շրջաններում և զբաղվում է գյուղատնտեսությունով, որի եկամուտը ավելի ցածր է երկրում մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակից: Սա ենթադրում է, որ խոցելիության հզոր ցուցանիշը մարզերի բնակչությունն է և որ պետք է անհապաղորեն կենտրոնանալ շրջանների խոցելիությունը նվազեցնելու վրա: Որոշ խոցելի խմբեր, ներառյալ աղքատները, հաշմանդամները և փախստականները, տնտեսական և մարդկային զարգացման անկումների ամենախոցելի հատվածն են և Հայաստանում գլոբալ ճգնաժամի ազդեցության արդյունքում կարող են շարունակել լինել ամենախոցելիները: Փախստականները շարունակում են խնդիրների առաջ կանգնել հիմնական ծառայությունների հասանելիության, աղքատության աստիճանի և գործազրկության առումով: Առողջապահության և կրթական համակարգեր մուտք գործելու դժվարությունները և երբեմն խարանը, շարունակում են հանդիսանալ խնդիրներ և չնայած կառավարության ջանքերին և դրական քաղաքականությանը, դեռևս չկա լիարժեք լուծում իրենց բնակարանային խնդիրներին և շատերը, այդ թվում տարեցները, ովքեր ամբողջովին հենվում են խնամքի և օգնության վրա, շարունակում են ապրել հանրակացարաններում` ծանր կենսապայմաններում:

Unequal economic opportunities, differences in regional development and evidence of the growing severity and depth of poverty suggest that further reductions in poverty rates are a major challenge for Armenia. To date, poverty reduction outside the capital has relied significantly on fiscal transfers and private remittances and this has decreased due to the global economic slowdown. The return of migrants due to the slowdown in the economy of host countries (mainly Russia) also places additional pressures on social service delivery and job creation efforts. Data shows that poverty rates are consistently higher in regions. Around 36 percent of the population live in rural areas and are engaged in subsistence agriculture and have income levels far below the per capita average for the country. This suggests that a strong indicator of vulnerability is the region of residence and that there is a need to urgently focus on reducing regional vulnerability. Several vulnerable groups including the poor, disabled and refugees are being hardest hit by the gaps in economic and human development, and may continue to be the hardest hit by the impact of the global economic crisis. Refugees continue to face problems in terms of access to basic services, poverty and unemployment. Difficulties to access health and education services and sometimes stigma continue to be challenges, and despite government efforts and positive policies, there is still no complete solution to their housing problem and many, including elderly who totally rely on care and assistance, continue to live in dormitories in appalling living conditions.

Չնայած վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի առողջապահական համակարգը բարելավման գործընթացում է, այն դեռևս կանգնած է շատ մարտահրավերների առջև: Հայաստանը պատկանում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ համաճարակի արագ աճի երկրներին: ՄԻԱՎ-ով վարակիր դեպքերի վերլուծությունը, ըստ տարիքային խմբերի և սեռի, ցույց է տալիս, որ ՄԻԱՎ-ով վարակակիր տղամարդկանց /84.3%/ և կանանց /83.6%/ մեծամասնությունը եիրտասարդներ են 20-44 տարիքային հատվածում: Երիտասարդների շրջանում ՄԻԱՎ-ի իրազեկումը ցածր է և ներկայիս կրթական համակարգը դեռ պատշաճորեն չի անդրադառնում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փաստացի խնդիրներին: Խարանը և խտրականությունը ՄԻԱՎ-ով վարակակիրների նկատմամբ առկա է և հանգեցնում է իրենց սոցիալական բացառմանը, խոչնդոտում է նրանց լիարժեք ինտեգրմանը հասարակության մեջ: ՄԻԱՎ-ի հետ կապված աճող վտանգի հետ մեկտեղ տուբերկուլյոզ/ՏԲ/ հիվանդության դեպքերը զգալիորեն ընդլայնվել են վերջին 15 տարիների ընթացքում: Բացի այդ, բազմադեղորայքակայուն ՏԲ լուրջ խնդիր է դառնում Հայաստանում: Ըստ հետազոտության, 2006-2007թթ. բազմադեղորայքակայուն ՏԲ տոկոսը նորովի հայտնաբերված ՏԲ դեպքերում կազմում է 9.4% և նախկինում բուժված հիվանդների՝ 42.3%:

Երկիրը ենթարկվում է բնական աղետների իսկայական ռիսկի, ինչպիսիք են՝ երկրաշարժեր, ջրհեղեղներ, երաշտ և սողանքներ: Բացի այդ, Մեծամորի ատոմակայանը, որը գտնվում է սեյսմիկ ակտիվություն ունեցող շատ բարձր գոտում, տեխնածին աղետների լրացուցիչ վտանգ է հանգեցնում: Կլիմայի փոփոխության արդյունքում առաջանում են ծայրահեղ եղանակային պայմաններ, ինչպիսիք են՝ երաշտներ և ջրհեղեղներ, որոնք կարող են հանգեցնել ավելի հաճախակի և ինտենսիվ բնական աղետների:

Գիտակցելով տնտեսությունում, սոցիալ-առողջապահական և աղետաի ռիսկի նվազեցման ոլորտում բաժին հասած մարտահրավերները, սպառնալիքներն ու փոփոխությունները, ՀԿԽԸ լինելով մարդասիրական ոլորտում օժանդակ կառույց կառավարությանը, գործում է երկրի տարածքում, արձագանքելով նշված ոլորտների մարտահրավերներին: ԱԸ, համագործակցելով միջազգային շարժման, կառավարության, տեղական իշղանությունների, քաղաքացիական հասարակության, կորպորատիվ սեկտորի և միջազգային գործընկերների հետ, անդրադառնում է այդ մարտահրավերներին: 2011-2020թթ. նոր ռազմավարական պլանը ստեղծվել է հիմնված Ֆեդերացիայի 2020 Ռազմավարության վրա, որը ընդունվել է 2011թ.-ի ՀԿԽԸ 22-րդ գլխավոր համագումարում: Ռազմավարությունը կծառայի որպես ուղեցույց առաջիկա ինը տարիների համար՝ ԱԸ առաքելությունը իրականացնելու և երկրում առկա կարքիներին անդրադառնալու համար:

Even though it has been improving over the last several years, the health system in Armenia still faces many challenges. Armenia belongs to the region with fast growth of the HIV/AIDS epidemic. Analysis of HIV cases according to age groups and gender shows that the majority of HIV-infected males (84.3%) and females (83.6%) are young people between the ages of 20-44. Awareness of HIV among young is low and the current educational system does not properly address the actual challenges in HIV/AIDS yet. Stigma and discrimination towards people leaving with HIV/AIDS exists, and this leads to their social exclusion, inhibiting their full integration into society. Along with the increasing risk posed by HIV, the incidence of Tuberculosis (TB) has expanded significantly during the recent 15 years. In addition, Multi Drug-Resistant (MDR) TB is becoming a serious problem in Armenia. According to the Drug Resistance Survey 2006-2007, the MDR TB rate in newly detected TB cases is 9.4%, and among previously treated patients is 42.3%.

The country is at high risk of natural disasters such as earthquakes, floods, drought, and landslides. In addition, the presence of the Metzamor nuclear plant in an area with a very high risk of seismic activity highlights the additional risk of man-made vulnerabilities. Climate change is likely to result in more extreme climate events in terms of droughts and floods, which may lead to more frequent and intensive natural disasters.

Realizing the challenges, threats and changes occurring in the economic, social, health and disaster risk reduction spheres, the Armenian Red Cross, being auxiliary to the public authorities in the humanitarian field, operates countrywide addressing the challenges brought forward by the spheres mentioned above. The National Society addresses those challenges in the partnership with the International Movement, government, local authorities, civil society, corporate sector and international partners. A new strategy for 2011-2020 was developed based on 2020Strategy of International Federation and adopted by the Armenian Red Cross 22nd General Assembly in 2011. The strategy will serve as a guide in the upcoming nine years in achieving the National Society's mission and addressing the needs existent in the country.


Մենք Ձեր կարմիր խաչն ենք
Հայաստանի Հանրապետության Հայկական կարմիր խաչի ընկերություն
ենք
մարդասիրության
գաղափարին
Հանրապետության · Հայկական կարմիր խաչի ընկերություն

# WHO WE ARE

# ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ

**Առաքելություն- Նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ: Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ: Ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ - տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:**

Հիմնադրվելով 1920թ., ՀԿԽԸ իրականացնում է իր առաքելությունը երկրում՝ մոբիլիզացնելով մարդասիրական ուժը բնակչության խոցելիությունը նվազեցնելու նպատակի շուրջ:

Հիմնադրման օրից ի վեր ԱԸ ձեռնարկում է ակտիվ և լայնածավալ գործունեություն՝ հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը և մատուցելով իր անկողմնակալ ծառայությունները և աջակցությունը իր 11 մարզային, 3 տարածքային և 52 համայնքային մասնաճյուղերի միջոցով տարբեր ոլորտներում, ինչպիսիք են սոցիալ-առողջապահությունը, առաջին օգնությունը, աղետների կառավարումը, որոնման ծառայությունը և ընտանեկան կապերի վերամիավորումը, միգրացիան, միջազգային մարդասիրական իրավունքը, բնապահպանությունը և այլն: Բազմաթիվ շահառուներ աջակցություն են ստանում ՀԿԽԸ կոմից իրականացված գործունեությունից, որը շարունակական բնույթ է կրում:

Լինելով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման համաշխարհային ցանցի անդամ նպաստում է ԱԸ առաջընթացին՝ զարգացնելով մի շարք հատկանիշներ, որոնք նպաստում են բնակչության խոցելի խավերին ավելի արդյունավետ օգնելուն, ներառելով երկրում առկա մարզային, տարածքային և համայնքային մասնաճյուղերը; փորձառու, եռանդուն ու նվիրված աշխատակազմը և կամավորները; բարելավված ենթակառուցվածքը և ամուր կապերը պետական մարմինների, ինչպես նաև տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: ԱԸ ունի փորձառու կառավարման և ղեկավարման համակարգ, իսկ մասնաճյուղերը զարգացել են՝ լինելու լավ գործընկերներ իրենց համայնքներում: Ավելի ու ավելի շատ երիտասարդներ ու կամավորներ ակտիվ գործունեություն են ծավալում

**Mission - "To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity. To be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population. To provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions."**

Founded in 1920 the Armenian Red Cross Society has been implementing its mission countrywide mobilizing the power of humanity towards minimizing the vulnerability of the population.

From its foundation date, the National Society carries out active and widespread activities being auxiliary to the government and delivering its impartial services and support countrywide through its 11 Regional, 3 Territorial and 52 Community branches in different fields, such as social and health care, first aid, disaster management, tracing service & reunification of family links, migration, IHL, ecological, etc. Numerous beneficiaries receive support from the activities carried out by ARCS which is ongoing.

The access to the International Red Cross and Red Crescent Movement's global network promotes the progress of the National Society, developing a number of characteristics that make it a better supporter of vulnerable people, including a country-wide network of regional and community branches; experienced, enthusiastic and committed staff and volunteers; improved infrastructure; and stronger links with governmental agencies, local and international organizations. The National Society has an experienced governance and management and branches have been empowered to be better partners of their communities. More and more youth and volunteers are taking an active role in Red Cross services.



ՍՊԱՆԴԱՐԱՏ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
ՀԿԽԸ հիմնադիր

SPANDARAT KAMSARAKAN
founder of ARCS

Կարմիր խաչի ցուցաբերած ծառայություններում:
Հայկական Կարմիր խաչի ընկերությունը 1995թ. Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի լիիրավ անդամ է և նույն թվականին ճանաչվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից :
1993թ. միանալով 1949թ. Ժնևյան կոնվենցիաներին և 1977թ. լրացուցիչ արձանագրություններին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնեց պարտավորություն աջակցելու Ազգային ընկերությանը մարդասիրական ոլորտում, ինչն էլ իր հերթին խթանեց համագործակցությունը կառավարության հետ և դրա զարգացումը :

ՀԿԽԸ հիմնադրման և զարգացման հիմնական տարեթվերը

**1920** ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը
**1921** ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը
**1922** Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը
**1925** ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ
**1992** ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր Խաչի միակ ազգային ընկերություն
**1992** ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը
**1993** ՀՀ միացավ 1949թ. Ժնևի 4 Կոնվենցիաներին և դրա **1977թ.** առաջին և երկրորդ Լրացուցիչ արձանագրություններին
**1993** ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ նախագահի հրամանագրով
**1995** ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն
**1995** ՀԿԽԸ դարձավ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միջազգային ֆեդերացիայի անդամ
**1997** Սոլֆերինո նահանգի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը
**2001** Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ներկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ

The Armenian Red Cross Society is a full member of the International Federation of the Red Cross and Red Crescent Societies from 1995 and in the same year has been recognized by the International Committee of the Red Cross.
In 1993 joining 1949 Geneva Conventions and its additional two protocols of 1977, the government of the Republic of Armenia made a pledge to support the National Society in humanitarian field which in its turn promoted the development and strengthening of cooperation.

Major dates in ARCS foundation and development

**1920** The Parliament of RA ratified the Statutes of ARCS
**1921** The activities of ARCS were resumed after temporary cancellation
**1922** The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic
**1925** ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR
**1992** ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS
**1992** "Gratsia" International Rehabilitation Center of ARCS was established in RA
**1993** RA ratified the Geneva Conventions of 1949 and its first and second Additional Protocols of 1977
**1993** ARCS was recognized by the RA President decree
**1995** ARCS was recognized by the International Committee of the Red Cross and the 166th National Society
**1995** ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member
**1997** ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino
**2001** ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly

**2002** ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը

**2003** Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ

**2005** Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ

**2005** Ավստրայում կայացած Եվրոպական համագործակցության համաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ

**2006** Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿՄ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում

**2011** ՀՀ միացավ Ժնևի  կոնվենցիաների 2005թ. 3-րդ լրացուցիչ արձանագրությանը:

**2002** The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems

**2003** ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva

**2005** ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul

**2005** ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria

**2006** ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens

**2011** RA ratified the Protocol to Geneva Conventions of 2005

## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

* ՀՀ ողջ տարածքում գործող ԿԽ ցանց
* Հմուտ մարդկային ռեսուրսներ /աշխատակազմ, կամավորներ/
* Լավ զարգացած հաշվետվողական համակարգ և ծրագրային կառավարման համակարգ
* Թափանցիկ հաշվապահական համակարգ
* Թափանցիկ և վստահելի գործելակերպ
* Լավ համագործակցություն գործընկերների՝ կառավարության, միջազգային և հասարակական կազմակերպությունների, կորպորատիվ հատվածի հետ
* Միջազգային փորձը կիսելու հնարավորություն
Կազմակերպության դրական իմիջ

### ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

* Օրենսդրական բազա՝ ԿԽ օրենքի բացակայություն
* Կառավարության կողմից ֆինանսավորման և արտոնությունների բացակայություն
* Սեփական միջոցների բացակայություն
* Հաղորդակցման և ռեսուրսների հայթայթման ոչ զարգացած համակարգ
* Սփյուռքի հետ չձևավորված համագործակցություն
* Թույլ մարզային կառույցներ
* ՀԿԽԸ դերի ոչ լիարժեք ընկալում

### ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Կառավարության, տեղական և միջազգային կազմակերպությունների, կորպորատիվ հատվածի, անհատների և սփյուռքի կողմից աջակցություն
* Տեխնիկական աջակցություն Կարմիր խաչի միջազգային շարժումից
* Միջազգային փորձը կիսելու հնարավորություն
* Անդամագրման ակտիվացում
* ՀԿԽԸ իմիջի բարելավում

### ՎՏԱՆԳՆԵՐ

* Գործունեության իրականացման համար ռեսուրսների պակաս
* Հմուտ անձնակազմի և կամավորների արտահոսք
* Այլ կազմակերպությունների հետ մրցակցություն
* ՀԿԽԸ գործունեությանը աջակցելու միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից ոչ բավարար հետաքրքրվածություն
* Նվիրատվությունների և հովանավորության մասին ոչ լիարժեք ձևավորված և կիրառելի օրենք, ինչպես նաև կազմակերպությունների և անհատների անտեղյակություն այդ օրենքի մասին
* Սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակ երկրում

## SWOT ANALYSIS

### STRENGTHS

* Countrywide RC network
* Experienced human resources (staff, volunteers)
* Well developed reporting and project management system
* Transparent accounting system
* Transparent and reliable way of working
* Good cooperation with external partners – government, local and international organizations, corporate sector
* International global experience and knowledge sharing
* Positive image of the organization

### WEAKNESSES

* Legislative base – absence of RC law
* Absence of financial support and subsidies from government
* Absence of own financial resources
* Non-developed system of  communication and fund raising
* Non-established cooperation with Diaspora
* Weak regional branches
* Non adequate acceptance of ARCS image

### OPPORTUNITIES

* Support from government, local and international organizations, corporate sector, Diaspora, businesses and individuals
* Technical support from experts, International movement
* International global experience and knowledge sharing
* Increase in the number of members
* Improvement of ARCS image

### THREATS

* Lack of  resources (financial, material) for implementation of activities
* Outflow of experienced staff and trained volunteers
* Competition with other organisations
* Insufficient interest of local and international organizations to support ARCS activities
* Weakly developed and fairly usable law of sponsorship and donations as well as unfamiliarity of the organizations on the law
* Poor socio-economic situation in the country


CROCE ROSSA ITALIANA
IFRC

# WHAT WE DO

# ԻՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ

### Ռազմավարական նպատակ 1

“Փրկել կյանքեր, պաշտպանել ունեցվածքը և հզորացնել վերականգնումը աղետներից և/կամ ճգնաժամերից”

Նպաստել տեղական համայնքների աղետակայուն լինելուն և նրանց կայուն զարգացմանը՝ բացահայտելով տեղական ռիսկերը, զարգացնելով կարողություններն ու մեխանիզմները, բարձրացնելով իրազեկման և կրթական մակարդակը:

Ազգային ընկերությունը ունի փորձագիտական բարձր պոտենցիալ/ունակություն ԱՌՆ ոլորտում և կարողանում է իրականցնել նպատակային ծրագրեր՝ տեղական համայն- քներին ու հասարակությանն աղետներից պաշտպանելու համար:

Հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության մարդկային և տեխնիկական կարողությունները՝ Աի դեպքում օպերատիվ արձագանքման և վաղ-վերականգնողական գործողություններ իրականացնելու համար:

Հզորացնել և զարգացնել ԱԸ կարողությունները ընտանեկան կապերի վերամիավորման ուղղությամբ, ներդաշնակեցնել այդ ուղղությամբ իրականացվող գործողությունները աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի ուղղությամբ իրականացվող գործողությունների հետ և համապատաս- խանեցնել դրանք միջազգային շարժման ռազմավարությանը, համագործակցելով դաշտում գործող պետական և այլ համապատասխան կառույցների հետ:

### Ռազմավարական նպատակ 2

“Ապահովել առողջ և անվտանգ կյանք”

Բարձրացնել բնակչության իրազեկությունը առողջ ապրելակերպի, թրաֆիքինգի, միգրացիայի, ՄԻԱՎ վարակի կանխարգելման, վնասի նվազեցման, հեպատիտի և տուբեր- կուլոզի ոլորտներում՝ կիրառելով աննախադեպ նորարարական մեթոդներ՝ հանրային լայնածավալ միջոցառումներ հայտնի անհատների մասնակցությամբ, տեղեկատվական քարոզար- շավներ, հաղորդագրությունների տեղադրում ինտերնետում և տարածում SMS-ով, SMS տեղեկատվական գծի գործարկում, հավասարը հավասարին ուսուցում և այլն:

Մատուցել սոցիալական ծառայություններ բնակչության խոցելի խմբերին՝ համայնքներում գործող սոցիալական կենտրոնների միջոցով; Ցուցաբերել սոցիալ-հոգեբանական աջակցություն սոցիալապես անապահով խավերին:

Կառուցել ապահով և առողջ համայնք՝ բնակչությանը զինելով ԱՕ գիտելիքներով և հմտություններով, տրամադրելով տեղեկու- թյուններ վնասվածքների ու պատահարների կանխարգելման և անվտանգ վարքագծի վերաբերյալ:

Ներգրավել շահառուներին ծառայությունների մատուցման գործընթացում:

### Ռազմավարական նպատակ 3

“Խթանել սոցիալական ներգրավվածությունը և ոչ-բռնության ու խաղաղության մշակույթը”

Նպաստել հանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը՝ պայքարելով խարանի և խտրականության դեմ:

Աջակցել խոցելի խմբերի ինտեգրմանը հասարակության մեջ՝ սոցիալ-հոգեբանական աջակցության և կրթական միջոցառումների միջոցով:

Տարածել ԿԽ շարժման հիմնարար սկզբունքներն ու մարդա- սիրական գաղափարները՝ խթանելով մարդկային արժեքների ձևավորմանը:

### Strategic aim 1

“Save lives, protect livelihoods and strengthen recovery from disasters and crises”

Promoting local communities resilience and their sustainable development by identifying local risks, developing the capacities and mechanisms, raising the level of awareness and education.

National Society has a high capacity in DRR sphere and is able to implement targeted programs directed at protection of the local communities and population from disasters.

Strengthening human and technical capacities of the Armenian Red Cross Society to operatively respond and realize early-recovery in case of disaster.

Strengthening and developing capacities of NS in restoring family links and bring them in compliance with DM/PM activities and RC/RC Movement Strategy in cooperation with governmental and other related structures.

### Strategic aim 2

“Enable healthy and safe living”

Increasing public awareness on healthy lifestyle, trafficking, migration, IHL, HIV prevention, harm reduction, hepatitis and tuberculosis by using innovative methods such as public large-scale events with participation of famous persons, informational campaigns, communication and information transmission through internet/social media and through mobile short messages, realiza- tion of sms informational helpline, peer to peer education, etc.

Rendering social services to vulnerable groups through the social centers present in the communities/regions and psycho-social support to socially vulnerable groups.

Building safer and healthy community by raising the knowledge and skills of population on first aid, providing information on injury and accident prevention and on safe behavior.

Involving beneficiaries in the process of provision of services.

### Strategic aim 3

“Promote social inclusion and a culture of non violence and peace”

Contributing to the creation of an atmosphere of tolerance by fighting against discrimination and stigma.

Supporting the integration of vulnerable groups into the society through psycho-social support and educational activities.

Disseminating fundamental and humanitarian principles of the Red Cross Movement by promoting the formation of human values.



# HOW WE WORK

# ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԳՈՐԾՈՒՄ

Հզորացնելով ԱԸ կարողությունները
Կառուցելով արդյունավետ համագործակցություններ
Խթանելով մարդասիրական արժեքները
Զարգացնելով ռեսուրսները

1. Մեր նպատակն է հզորացնել մեր ԱԸ, որպեսզի ունենանք
ա) Բարձր արդյունավետություն ծրագրերն իրականացնելու ուղղությամբ
բ) Լավ կարողություններ՝ ղեկավարելու, ռեսուրսները մոբիլիզանելու և աշխատանքը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ
գ) Օրինական հիմք և բարենպաստ նախադրյալներ մեր առաքելությունն իրականացնելու և ՀԿԽԸ ներկայացնելու համար
դ) Ուժեղ մարզային կառույցներ՝ տեղում արդյունավետ գործելու համար

2) Մեր գործունեության բոլոր ոլորտներում շատ կարևորում ենք համգործակցությունը ազգային և միջազգային մակարդակներում, որի միջոցով տեղի է ունենում արժեքավոր գիտելիքների և փորձի փոխանակում, մեկտեղվում են ջանքերն ու ռեսուրսները հանրօգուտ գործի համար: ՀԿԽԸ համագործակցությունը տեղական կազմակերպությունների և դոնորների հետ առաջնահերթ խնդիրներից է, քանի որ մենք ձգտում ենք մեր հասարակության մեջ սեփական խնդիրները ինքներս՝մեր միջոցներով լուծելու մտածողություն սերմանել: Ուսումնասիրելով մեր քույր ԱԸ-երի փորձը հաղորդակցության հաստատման բնագավառում և համագործակցելով ԿԽՄՖ և այլ ԱԸ-ների հետ՝ մենք նպատակ ունենք զարգացնել մեր կազմակերպության հաղորդակցության հաստատման և ռեսուրսների մոբիլիզացման կարողությունները՝ մեր երկրում առկա սոցիալական խնդիրներին լավագույնս արձագանքելու համար:

3) 1920 թվականից ի վեր մենք, ԿԽ միջազգային շարժման սկզբունքներին հավատարիմ, առաքելություն ենք ստանձնել՝ լինել մարդասիրության և բարեգործության ջատագովը Հայաստանում: Տարածելով և խթանելով մարդասիրական արժեքները նպատակ ենք հետապնդում ստեղծել արդարամիտ, կարեկից և հանդուրժող հասարակություն:

4) Ստեղծելով և զարգացնելով համագործակցությունը տեղական իֆքնակառավարման մարմինների, տեղական հնարավոր դոնորների, /ձեռներեցների/ և կորպորատիվ հատվածի հետ:

Strengthening the capacities of NS
Creating effective cooperations/partnerships
Promoting humanitarian values
Developing resources

1) Our objective is to strengthen our NS, in order to have
a) High efficiency in implementing programs
b) Good skills to manage, mobilize resources and organize the work effectively countrywide
c) Legal base and favorable conditions to carry out our mission and to present ourselves
d) Strong Regional Branches to act effectively at a local level

2) We attach great importance to cooperation on both national and international levels in all the spheres of our activities, which contributes to an exchange of valuable knowledge and experience, to building and directing of joint efforts and resources serving to the public benefit. Cooperation with the government, local and international organizations, our partners/donor organisations is one of the priorities of the National Society. Investigating movement experience in establishment of communication and cooperating with IFRC, ICRC and other NSs we aim to develop our organization by establishing communication and resource mobilization capacities to best respond to social problems existing in our country.

3) Since 1920, we are committed to the principles of the International Movement of Red Cross, we have undertaken a mission to be an advocate of humanity and charity in Armenia. Through dissemination and promotion of humanitarian values, we aim to create a fair, compassionate and tolerant society.

4) Creating and developing the cooperation with the government, local authorities, international organizations, local potential donors, businesses and with corporate sector.



# WHERE WE REACH

# ՈՒՐ ԵՆՔ ՀԱՍՆՈՒՄ

Շնորհիվ ԱԸ հզորացման, արդյունավետ համագործակցության հաստատման և որակյալ ծառայությունների մատուցման, Ռազմավարության իրականացման արդյունքում

- Ունենք ավելի բարձր հեղինակություն և ընկալում ՀՀ կառավարության, գործընկերների և հասարակության կողմից
- ՈՒնենք աղետներին նախապատրաստման և արձագանքման, սոցիալ-առողջապահական, թրաֆիքինգի, միգրացիայի, առաջին օգնության, ընտանեկան կապերի վերամիավորման ոլորտներում առավել իրազեկ և պաշտպանված ազգաբնակչություն
- Ունենք առավել անվտանգ հասանելիություն խոցելի համայնքներում
- Ունենք հզոր կապեր ու համագործակցություն ԿԽ/ԿՄ ՄՖ և քույր Ազգային ընկերությունների հետ
- Նպաստել ենք առկա միջազգային զարգացումների և փորձի ներդրմանը Հայաստանում

Due to the strengthening of NS, establishment and development of an effective cooperation and rendering qualified services, as a result of the strategy, the NS

- has a high image, reputation and perception from the side of the government, partners and society
- has more informed and better protected population in the area of disaster preparedness and response, health and care, IHL, trafficking, migration, first aid, restoring of family links
- has safer access to the vulnerable communities
- has strong relations and cooperation with IFRC, ICRC and the sister National Societies
- contributed to the integration of current international develop ments and experiences in Armenia

## Ռազմավարական նպատակ 1

- ՈՒնենք ավելի աղետակայուն տեղական համայնքներ և հետևաբար պետություն
- ՈՒնենք մեր հստակ դերն ու առաքելությունը ԱՌՆ ոլորտում
- ՈՒնենք ավելի իրազեկ և կրթված ազգաբնակչություն
- ԱԸ ունի ԱՌՆ և աղետներին արձագանքման ոլորտո ւմ մարդկային և տեխնիկական զարգացած կարողություններ
- Նպաստել ենք Հայաստանում ԱՌՆ ոլորտում բազմամակարդակ համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը

## Strategic aim 1

- have more resilient local communities and therefore country
- have our own distinct role and mission in DRR sphere
- have more informed and educated population
- NS has developed human and technical capacities in the DRR and disaster response sphere
- Contributed to the development and strengthening of multilevel cooperation in the sphere of DRR in Armenia

## Ռազմավարական նպատակ 2

- Ունենք բնակչության խոցելի խմբերին հասանելի սոցիալ- հոգեբանական համակարգ
- Ունենք առողջ հասարակություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի, վնասի նվազեցման և հեպատիտներ B, C-ի ոլորտում հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացման արդյունքում

## Strategic aim 2

- have psycho-social care system accessable to vulnerable groups
- have a healthy society informed and educated on HIV / AIDS, TB, harm reduction hepatitis B, C
- have more informed and protected society on migration, trafficking, IHL issues

## Ռազմավարական նպատակ 3

- Նպաստել ենք խոցելի սոցիալական խմբերի և փախստականների սոցիալ-հոգեբանական վերականգնմանը և հասարակության մեջ նրանց ներգրավմանը:
- Նպաստել ենք հասարակության շրջանում ՄԻԱՎ-ով ապրող մարդկաց նկատմամբ խարանի և խտրականության նվազեցմանը:
- Ունենք ԿԽ սկզբունքների և առաքելության վերաբերյալ իրազեկված ազգաբնակչությունը:
- Ունենք առողջ հասարակություն հանդուրժողականության մթնոլորտի ստեղծման, սոցիալ-հոգեբանական աջակցության, խարանի և խտրականության նվազեցում արդյունքում:

## Strategic aim 3

- contributed to the psyco-social rehabilitation and integration into the society of the vulnerable social groups and refugees
- contributed to the decrease of stigma and discrimination towards people living with HIV
- have informed population on principles and mission of the Red Cross
- have a healthy society through creating an atmosphere of tolerance, provision of psychosocial support and reduction of stigma and discrimination







# NOTES
# ՆՇՈՒՄՆԵՐ

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society

ՀՀ, ք. Երևան, 0015, Պարոնյան 21/1
Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Կենտրոնական գրասենյակ
Հեռ.՝ (+374 10) 58 36 30
Ֆաքս՝ (+374 10) 58 36 30
Էլ փոստ redcross@redcross.am
Ինտ. կայք՝ www.redcross.am

Armenian Red Cross Society
National Headquarters
Address: 21/1 Paronyan Str., Yerevan, Armenia, 0015
Phone: (+374 10) 58 36 30
Fax: (+374 10) 53 84 91
E-mail: redcross@redcross.am
Web. site: www.redcross.am